

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<Երեխայի իրավունքների պաշտպանության 2014 թվականի տարեկան ծրագիրը> (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է <<Երեխայի իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 և 34 հոդվածների պահանջներին համապատասխան:

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1694-Ն որոշմամբ>> հաստատված քաղաքականության հիմնական ուղղություններն ու նպատակները:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված <<Կայուն զարգացման ծրագրի>> դրույթներին, համապատասխանում է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին և ուղղված է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը:

II. Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

1. **սոցիալական պաշտպանության ոլորում՝** կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, նշված հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավումը, նրանց ինտեգրումը հասարակությանը,
2. **առողջապահության ոլորտում՝** երեխաների բժշկական օգնության որակյալ և մատչելի ծառայությունների ապահովումը, ինչպես նաև հիվանդությունների

կանխարգելման միջոցառումների իրականացումը՝ ուղղված մանկական մահացության և հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը,

3. **կրթության ոլորտում՝** կրթության համակարգի պահպանումը և շարունակական զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ հիմնական կրթության ապահովումը, հանրակրթական դպրոցներում ներառական կրթության հնարավորության ապահովումը, սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարումը,

4. **մշակույթի ոլորտում՝** երեխայի գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումն ապահովելը,

5. **անչափահասների արդարադատության ոլորտում՝** իրավախախտումներ կատարած անչափահասների վերականգնողական կենտրոնների ցանցի ընդլայնումը, անչափահաս դատապարտյալների զբաղվածության ապահովումը:

Օրագրի խնդիրն է՝

1. **սոցիալական պաշտպանության ոլորտում՝** առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, սոցիալմանկավարժական, սոցիալիոգեթանական գործնական աջակցության ցուցաբերումը, երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի հզորացումը, սոցիալական պաշտպանության ոլորտի այլընտրանքային համակարգի ընդլայնումը և հզորացումը,
2. **առողջապահության ոլորտում՝** ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ապահովումը, հիվանդանոցային բուժօգնության ապահովումը, վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը,
3. **կրթության ոլորտում՝** նախադպրոցական կրթության ծառայությունների որակի ու մատչելիության ապահովումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրման չափորոշիչների և կիրառվող գործիքների կատարելագործումը, ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցի ընդլայնումը,
4. **մշակույթի ոլորտում՝** գեղարվեստական կրթության մատչելիության ապահովումը, գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովումը, ուսուցման մատչելիության ապահովում արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում՝ մասնավորապես սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և իրավախախտում կատարած անչափահաս երեխաների մշակութային կրթության ապահովմամբ,
5. **անչափահասների արդարադատության ոլորտում՝** ինչպես անչափահասների կողմից, այնպես էլ նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման և բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը:

Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում

Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից վերջին տարիների իրականացված քաղաքականության հիմնական նպատակը կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների կյանքի որակի բարելավումն է:

Օրագրի նպատակն է՝

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանվածության ապահովումը, այդ թվում՝

- կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, նշված հաստատություններում խնամվող երեխաների ինտեգրումը հասարակությանը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովումը, այդ թվում՝ մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, անհրաժեշտ պահանջմունքների բավարարումը, սոցիալիզացիաների և բժշկական վերականգնման իրականացումը:

- մանկատանը խնամվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը:

- երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում և մանկատաներում խնամվող մինչև 18 տարեկան երեխաների ընտանիք վերադարձի ապահովումը, հաստատություններում տեղավորման ռիսկի ենթակա երեխաների մուտքի կանխարգելումը հաստատություններ:

- մանկատաների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպումը և հասարակությանը ինտեգրման գործընթացի համակարգումը:

- 6-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, սոցիալմանկավարժական, սոցիալիզացիաների և գործնական աջակցության ցուցաբերումը:

- առանց ծնողական խնամքի մնացած մանկատան սաների խնամքի և դաստիարակության, ֆիզիկական և մտավոր զարգացման, կրթության գործընթացի ապահովումը, սոցիալական որբության երևույթի կանխարգելումը՝ խնամատար ընտանիքում խնամվող երեխայի խնամքի և դաստիարակության ապահովման շնորհիվ:

- այլընտրանքային ծառայությունների ընդլայնման միջոցով երեխաների հոսքի նվազեցումը մանկատաներ, և հատուկ հանրակրթական հաստատություններ, 6-18

տարեկան երեխաների սոցիալական վերականգնումը, շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը:

- հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը՝ անկախ սեռից:
- հանրապետությունում թրաֆիքինգի և բռնության երևույթի կանխարգելումը:

Հաշվի առնելով խնդրի շարունակական բնույթը, առաջիկա տարիներին անհրաժեշտ է աշխատանքներն ուղղել մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

Ծրագրի խնդիրն է՝

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների վերհանում, իրավիճակի բարելավում՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածքով ապահովելու աջակցություն,
- մանկատներում չափորոշիչներին համապատասխան ծառայությունների մատուցում՝ խնամքի որակի շարունակական բարելավմամբ
- կենսաբանական ընտանիքներ երեխայի վերադարձի ապահովում
- ռիսկի գոտում գտնվող երեխաների մուտքի կանխարգելում մանկատուն և գիշերօթիկ հաստատություն՝ այլընտրանքային հաստատությունների ստեղծման և ծառայությունների զարգացման միջոցով
- հանրապետության բոլոր մարզերում բեռնաթափման ծրագրերի իրականացում
- ՀՀ մանկատների շրջանավարտների աջակցության բավարար հնարավորությունների ապահովում
- երեխաներին ուղղված պետական սոցիալական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների ներդրում:

III. Ներկա իրավիճակը

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների աջակցության քաղաքականությունն ուղղված է այդ երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, ինչպես նաև երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, նրանցում խնամվող երեխաների խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական զարգացման և հասարակությանն ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Հանրապետությունում ձևավորվել և գործում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում, որի նպատակը՝ երեխաների պաշտպանության միասնական և համակարգված քաղաքականության իրականացման ապահովումն է:

ՀՀ Վարչապետի որոշմամբ ստեղծվել և 2005 թվականից գործում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի գործունեությունը հիմնականում ուղղված է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման միասնական պետական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության համակարգմանը:

2006 թվականից գործում են Երևանի քաղաքապետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը և մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, որոնց խնդիրն է մարզերում և Երևան քաղաքում ՀՀ կառավարության կողմից հաստատված երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը և նպատակային ծրագրերի մշակումը և իրագործումը:

Ընտանեկան օրենսգրքով ամրագրված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները հանդիսանում են երեխաների իրավունքների պաշտպանության առաջին մակարդակը, որոնք համագործակցելով մարզպետարանների համապատասխան բաժինների հետ, իրականացնում են երեխաների իրավունքների պաշտպանությունը համայնքներում:

Երեխաների իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրի շրջանակում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1. **«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ»** միջոցառման շրջանակում համաձայն կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում /մանկատուն, գիշերօթիկ/ երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1735-Ն և ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն և ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Մանկատանը (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումների՝ շուրջ 740 առանց ծնողական խնամքի մնացած 0-18 տարեկան երեխա խնամվում է նախարարության համակարգում գործող երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություններում (այսուհետ՝ մանկատուն), որտեղ իրականացվում է նրանց շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը՝ սոցիալիզացիայի վերականգնման աշխատանքները, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սնունդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը: Վերը նշված 6 մանկատանից 3-ը ընդհանուր տիպի է, 3-ը՝ մասնագիտացված մանկատներ են, որտեղ իրականացվում են կենտրոնական նյարդային համակարգի

ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաների շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը:

2. **«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ»** միջոցառման շրջանակում համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում /մանկատուն, գիշերօթիկ/ երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1735-Ն և ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն և ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Մանկատանը (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումների՝ սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված ընտանիքների 6-18 տարեկան 800 երեխա խնամվում է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատությունում, որտեղ երեխաների խնամքը տարանջատվում է կրթությունից և կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում՝ երեխային հասարակությանն ինտեգրելու նպատակով:

3. **«Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ»** միջոցառման շրջանակներում համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 1877-Ն որոշման՝ նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնի կողմից ծառայություններ են տրամադրվում ռիսկի ենթակա 6-18 տարեկան թվով 300 երեխայի և նրանց ընտանիքներին:

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկակատների շրջանավարտներին» միջոցառումն իրականացվում է համաձայն նախարարության և «Հայ Օգնության Միություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ սոցիալական գործընկերության շրջանակներում կնքված պայմանագրի: Միջոցառումն իրականացվում է 2003 թվականից և մինչև 2013թ. ընդգրկվել է մանկատան 1991-2012 թվականների 433 շրջանավարտ:

Միջոցառումն ունի երկու բաղադրիչ.

- **«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն»**, որի շրջանակում մանկատների շրջանավարտների համար նախատեսվում է բնակելի տարածքով ապահովում, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում. հիմնական կարիքները բավարարող եկամուտի ապահովում, բժշկական օգնության անվճար տրամադրում, իրավաբանական օգնության տրամադրում: Բնակելի տարածքով ապահովվում են այն շրջանավարտները /առանց ծնողական խնամքի մնացած

երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք/, ովքեր չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարվա ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը: 2003-2008թթ. բնակարաններ են տրամադրվել 163 շրջանավարտի: 2009, 2010, 2011 և 2012 թթ. նախատեսված բնակարանները չեն գնվել՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» թիվ 341-Ն որոշման, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում հատկացրել է 6 բնակարան՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 983-Ն որոշմամբ սահմանված կարգով: Համաձայն ՀՀ Վարչապետի 2010 թվականի օգոստոսի 24-ի «Մարալիկում սոցիալական բնակարանների համալիրի կազմակերպման և կառավարման գործընթացը համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա գործունեության կարգն ու Հայաստանի Հանրապետությունում անօթևան միայնակ տարեցների և բնակարանի կարիք ունեցող այլ սոցիալական խմբերին պատկանող անձանց համար սոցիալական բնակարանների համալիրի ստեղծման հայեցակարգի կիրարկումն ապահովող՝ 2010-2012 թվականներին իրականացվելիք միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 370-Ն որոշմամբ հաստատված 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված ծրագիր-ժամանակացույցի 9-րդ և 13-րդ կետի՝ մանկատան 27 շրջանավարտի տրամադրվել է սոցիալական բնակարաններ ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում:

Մինչև 2013թ. միջոցառումն ընդգրկել է մանկատան 1991-2012 թվականների 433 շրջանավարտի:

- **«Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառումը.**

Համաձայն ՀՀ Կառավարության 2003թ. հոկտեմբերի 30-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի 20-րդ և 2004թ, օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատաններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 49-րդ կետերի, նախատեսվել է յուրաքանչյուր տարի ՀՀ մանկատաների շրջանավարտներին տրամադրել կրթաթոշակ՝ յուրաքանչյուրին 12.0 հազ. դրամի չափով և միանվագ դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 50.0 հազ. դրամի չափով:

2014թ. նախատեսվում է միջոցառումն իրականացնել Վանաձոր և Գավառ քաղաքներում, համապատասխանաբար, «Վանաձորի մանկատուն» և «Գավառի

մանկատուն» ՊՈԱԿ-ների 18-23 տարեկան շրջանավարտների համար, որի շրջանակում մանկատան շրջանավարտների համար կիրականացվեն. ուսումնասիրություն, անհատական ծրագրերի կազմում, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, բժշկական օգնության, իրավաբանական աջակցության տրամադրում, շահառուների սոցիալական պատրոնաժ, շահառուներին ամենամյա դրամական աջակցության տրամադրում, ժամանակավոր կացարանով ապահովում, որի շրջանակում կկատարվեն ծառայության իրականացման գործընթացի ապահովման և համակարգման աշխատանքներ: Ծառայության իրականացման գործընթացի ապահովման և համակարգման աշխատանքները կիրականացվեն Վանաձոր և Գավառ քաղաքներում երկու ՀԿ-ների կողմից ձևավորված մասնագիտական թիմով՝ յուրաքանչյուրում մեկ ծրագրի ղեկավար, մեկ հաշվապահ, մեկ սոցիալական աշխատող, մեկ մանկավարժ, մեկ իրավաբան:

Մատուցվող ծառայություններն են.

Շրջանավարտների հիմնահարցերի ուսումնասիրություն, կարիքների գնահատում և դրանց հիման վրա անհատական ծրագրերի կազմում.

Վերոհիշյալ ծառայությունների արդյունքում ընտրվում են միջոցառման շահառուները, որոնցից յուրաքանչյուրի համար կազմվում է անհատական ծրագիր:

Շրջանավարտների մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում.

Ելնելով աշխատանքի շուկայի պահանջներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջանավարտների նախասիրությունները, նախատեսվում է ապահովել շրջանավարտներին կրթություն՝ համապատասխան մասնագիտական վերապատրաստում ստանալու հնարավորությամբ.

ա) առաջնային մասնագիտական ուսուցում,

բ) մասնագիտացման վերապատրաստում,

գ) միջին մասնագիտական կրթության ապահովում,

դ) բարձրագույն մասնագիտական կրթության ապահովում:

Կներկայացվեն համապատասխան հայտեր՝ գործատուների մոտ նախնական մասնագիտական ուսուցման դասընթացներում սաներին ներգրավելու վերաբերյալ:

Շրջանավարտներին բժշկական աջակցության տրամադրում.

նախատեսվում է միջոցառման բոլոր շահառուներին ընդգրկել ամենամյա պետական առողջապահական նպատակային ծրագրերում:

Շրջանավարտներին իրավաբանական աջակցության տրամադրում.

Շրջանավարտների ուսումնասիրությունից հետո, անհրաժեշտության դեպքում, նախատեսվում է իրականացնել նրանց գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանություն, իրավաբանական խորհրդատվության տրամադրում:

Սոցիալական պատրոնաժ.

նախատեսվում է ընտրված շահառուներին ընդգրկել հետագա կյանքի պայմանների վերահսկողության փուլում՝ մինչև 23 տարին լրանալը շահառուները կլինեն իրականացնող հասարակական կազմակերպության մասնագետների ուշադրության կենտրոնում:

Մանկատան շրջանավարտներին ժամանակավոր կացարանով ապահովում.

Սույն ծառայության իրականացման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է վարձակալել կամ սոցիալական բնակարանային ֆոնդի առկայության դեպքում տրամադրել բնակարաններ Վանաձոր և Գավառ քաղաքներում՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց բնակարանի տրամադրումը:

- **«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում»**, որի շրջանակում 35 շահառուի յուրաքանչյուր տարի տրամադրվում է կրթաթոշակ /15 շահառու/ և միանվագ դրամական օգնություն /20 շահառու/:

4. **«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ»** միջոցառման շրջանակում ծառայություններ են մատուցվում «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի 4 ցերեկային կենտրոնի /Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ/ դժվար իրավիճակներում գտնվող 250 երեխայի: Նշված կենտրոնները, ինչպես նախորդ տարիներում, աջակցություն են ստանում ՀՀ պետական բյուջեից՝ 84 աշխատակցի տրամադրվում է աշխատավարձ:

5. **«Հայաստանի Հանրապետության երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ»** միջոցառումն ունի 2 բաղադրիչ:

- նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ Լոռու մարզում իրականացվող միջոցառումը, որը նախատեսում է մանկատների և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններից երեխաներին վերադարձնել կենսաբանական ընտանիքներ, ինչպես նաև կանխարգելել նրանց մուտքը վերոնշյալ հաստատություններ: Միջոցառման շրջանակում հաստատություններից յուրաքանչյուր տարի կենսաբանական ընտանիք է վերադառնում և կանխարգելվում է 50 երեխայի մուտքը հաստատություններ:

- **«Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում»** ծառայությունը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի 50 երեխայի ընտանիքների տրամադրվում է

աջակցություն՝ սննդի զամբյուղ, գրենական պիտույքներ և դասագրքեր, Էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

Կարևորելով այն հանգամանքը, որ կանխարգելման միջոցով պահպանվում է երեխա-ընտանիք-հասարակություն կապը, իսկ հաստատություններում չի ավելանում խնամվող երեխաների թիվը՝ <<ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) և հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ծառայություններ>> ծրագրի շրջանակում պահպանելով երեխաների ընդհանուր թվաքանակը՝ 50, ծրագրում կավելանա կանխարգելման միջոցով ընտանիքներում խնամք ստացող երեխաների թիվը: 2014թ. կրնտրվի 20 երեխա՝ կենսաբանական ընտանիք վերադարձնելու նպատակով /բեռնաթափում/, ինչպես նաև 30 երեխա՝ նրանց մուտքը հաստատություններ կանխարգելելու նպատակով:

2015 և 2016թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի 10 երեխայի վերադարձնել կենսաբանական ընտանիք, կանխարգելել 40 երեխայի մուտքը հաստատություններ:

2014 թվականից նախատեսվում է ընդլայնել ծրագրի շրջանակները և ընդգրկել ՀՀ Շիրակի մարզը՝ խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում գտնվող երեխաների խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքներում իրականացնելու նպատակով:

Սույն միջոցառումը պայմանավորված է 2006 թվականից ՀՀ Լոռու մարզում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) և հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու միջոցառումների իրականացման արձանագրված հաջողությամբ, որի արդյունքում հաստատություններից կենսաբանական ընտանիք է վերադարձել 260 երեխա և կանխարգելվել է 90 երեխայի մուտքը հաստատություններ (ընդամենը՝ 350 շահառու): Ակնառու է, որ համանման նախաձեռնության իրականացումը ՀՀ Շիրակի մարզում նույնպես զգալիորեն կնվազեցնի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամքի տրամադրման բեռը:

Նախաձեռնությունն ունի 2 բաղադրիչ.

1. հաստատություններից երեխաների բեռնաթափմանը և կանխարգելմանն ուղղված ուսումնասիրություն, երեխայի կարիքի գնահատում և շահառուների ընտրություն,
2. ընտրված շահառուների ընտանիքներին սոցիալական փաթեթի տրամադրում, որը ներառում է սնունդ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ, ինչպես նաև էներգիայի ծախսի մասնակի փոխհատուցում:

1-ին բաղադրիչ	2014թ.	2015թ.	2016թ.
Բեռնաթափում	30	30	30
Կանխարգելում	20	20	20
2-րդ բաղադրիչ			

Ծրագրի բյուջեի սահմանում տարեկան մեկ անգամ ընտանիքին կարող է տրամադրվել աջակցություն՝ ըստ ընտանիքի գնահատված կարիքի:

Սույն նախաձեռնությունը պայմանավորված է երեխաների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներով և ՀՀ Կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1694-Ն որոշման հավելված 2-ի 2-րդ կետի պահանջով:

Հայաստանի Հանրապետության Կառավարության որդեգրած քաղաքակա- նության հիմնական գաղափարախոսությունը երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում ապահովելն է՝ մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման միջոցով:

Երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու նպատակով 2006 թվականից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացվում է «Հայաստանի Հանրապետության երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում) միջոցառումը՝ նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն, որը նախատեսում է ՀՀ Լոռու մարզի մանկատնից և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից երեխաներին վերադարձնել կենսաբանական ընտանիքներ, ինչպես նաև կանխարգելել նրանց մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակներում հաստատություններից յուրաքանչյուր տարի կենսաբանական ընտանիք է վերադառնում և կանխարգելվում է 50 երեխայի մուտքը հաստատություններ:

Նոր նախաձեռնության նպատակը՝ ՀՀ Շիրակի մարզի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում գտնվող երեխաների խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքներում իրականացնելն է:

Նախաձեռնությունը բաղկացած է 2 միջոցառումից.

- ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) և հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ծառայություններ> միջոցառումը,
- Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություններ մուտքի կանխարգելման նպատակով երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում> միջոցառումը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի 50 երեխայի ընտանիքների

տրամադրվում է աջակցություն՝ սննդի զամբյուղ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

Մարզում մեծ է նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների թիվը: Յոթ հաստատությունում /մանկատուն, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն/, ներկայում խնամվում և դաստիարակվում է շուրջ 560 երեխա:

Նախաձեռնությունը նախատեսում է Շիրակի մարզի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (<Գյումրու երեխաների տուն> մասնագիտացված մանկատուն, <<Գյումրու Ֆ. Նանսենի անվան> երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>>, <<Գյումրու թիվ 1 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>>, <Տիրամայր Հայաստանի կենտրոն> բարեգործական մանկատուն, <Թռչունյան տուն> երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն> <Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ /օժանդակ/ դպրոց>, <Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց>) խնամվող երեխաներին վերադարձնել կենսաբանական ընտանիքներ, ինչպես նաև կանխարգելել ռիսկի ենթակա երեխաների մուտքն այդ հաստատություններ:

2010 թվականից <Վորլդ Վիժըն Հայաստան> միջազգային կազմակերպության կողմից իրականացվել է երեխաների շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվող երեխաների ընտանիքների ուսումնասիրություն, որի հիմնական նպատակն է երեխային վերադարձնել կենսաբանական ընտանիք: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են հաստատությունների սաների ընտանիքների սոցիալտնտեսական ծանր վիճակի մասին՝ ընտանիքի շարունակական աղքատացում, աշխատաշուկայի բացակայություն, հետևաբար, մշտական եկամուտի բացակայություն, ծնողների առողջական խնդիրներ, վատթար բնակարանային պայմաններ:

6. **«Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ»** միջոցառման շրջանակում համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» թիվ 459-Ն որոշման՝ յուրաքանչյուր տարի առանց ծնողական խնամքի մնացած 25 երեխա խնամվում է խնամատար ընտանիքներում՝ մինչև նրանց 18 տարին լրանալը:

7. **«Մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում»** միջոցառման շրջանակներում համաձայն ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում

երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշման՝ մանկատներում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ երեխաներին տրամադրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար՝ /գրպանի ծախս/:

8. «Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1659-Ն որոշման՝ «Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոնի կողմից յուրաքանչյուր տարի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 3-18 տարեկան թվով 20 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք, մինչև նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելը, մանկատուն կամ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելը:

Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական խնդիրներից է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների պետական հոգածության ապահովումը:

2010-2012թթ. շարունակվել է իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի շուրջօրյա խնամքի հաստատություններում (մանկատներում) երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը:

2010 թվականին շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվել է 791 երեխա, այդ թվում 405-ը՝ մասնագիտացված մանկատներում, 2011 թվականին՝ 794 երեխա, այդ թվում 414-ը՝ մասնագիտացված մանկատներում, 2012 թվականին՝ 747 երեխա, այդ թվում 419-ը՝ մասնագիտացված մանկատներում: 2013 թվականի առաջին կիսամյակում համակարգի մանկատներում խնամվել է 746 երեխա, այդ թվում 498-ը՝ մասնագիտացված մանկատներում:

Վերջին երեք տարիների ընթացքում բեռնաթափման գործընթացի իրականացմամբ պայմանավորված՝ կրճատվել են մանկատներում խնամվող երեխաների պլանային թվերը, ինչպես նաև նվազել են մանկատներում խնամվող երեխաների փաստացի թվերը: Այսպես, ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի համար հաստատված 860 երեխայի փոխարեն մանկատներում փաստացի խնամվել է 794 երեխա՝ հաստատված թվի 92.3%-ը, 2012 թվականի համար հաստատված 790 երեխայի փոխարեն մանկատներում ընդհանուր առմամբ խնամվել է 747 երեխա՝ հաստատված թվի 94,6%-ը: Միաժամանակ աճել է խնամվողների թիվը մասնագիտացված մանկատներում:

Թեև մանկատներում շարունակվում է նվազել խնամվող երեխաների թիվը, այնուհանդերձ հանրապետությունում առկա է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թվի ավելացման միտում, ինչի մասին փաստում է հիվանդության պատճառով ծնողների կողմից հրաժարված երեխաներին մասնագիտացված մանկատուն հանձնելու մասին տրվող եզրակացությունների թիվը:

Խնդրի կարգավորման նպատակով ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի հունիսի 7-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 210-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 716-Ն որոշումը, համաձայն որի Մարի Բզմիրյանի անվան ընդհանուր տիպի մանկատունը փոխել է իր տիպը՝ դառնալով մասնագիտացված մանկատուն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունվարի 31-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի հուլիսի 30-ի թիվ 98-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Բզմիրյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 16-Ա/1 հրամանը:

Մանկատներից կենսաբանական ընտանիք է տեղափոխվել 2010 թվականին՝ 40 երեխա, 2011 թվականին՝ 44 երեխա, 2012 թվականին՝ 35 երեխա, 2013 թվականի առաջին կիսամյակում՝ 40 երեխա:

Խնամատար ընտանիքներում 2010 թվականին խնամվել է 24 երեխա, 2011 թվականին՝ 24 երեխա, 2012 թվականին՝ 23 երեխա: 2013 թվականի առաջին կիսամյակում խնամատար ընտանիքներում խնամվել է 20 երեխա:

2010 թվականին որդեգրվել է 138 երեխա, հաշվառվել է որդեգրման ենթակա 187 երեխա, 394 որդեգրել ցանկացող անձ: 2011 թվականին որդեգրվել է 123 երեխա, հաշվառվել է որդեգրման ենթակա 165 երեխա, 334 որդեգրել ցանկացող անձ: 2012 թվականին որդեգրվել է 73 երեխա, հաշվառվել է որդեգրման ենթակա 103 երեխա, 346 որդեգրել ցանկացող անձ: 2013 թվականի առաջին կիսամյակում հաշվառվել է որդեգրման ենթակա 67 երեխա, 62 որդեգրել ցանկացող անձ, որդեգրվել է 27 երեխա:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մանկության պաշտպանության համակարգի բարեփոխումների ռազմավարություն, որը ենթադրում է ռիսկի ենթակա երեխաների խնամքի և սոցիալական հոգածության ենթահամակարգի ապակենտրոնացում, երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացում, ինչը պայմանավորված է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրականացմամբ: Խնդրի լուծման նպատակով ընդունվել է ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 804-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն և 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1735-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»>> ՀՀ կառավարության որոշումը:

Կարևորելով այն հանգամանքը, որ կանխարգելման միջոցով պահպանվում է երեխա-ընտանիք-հասարակություն կապը, և մանկատներում չի ավելանում խնամվող երեխաների թիվը, ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալական

ապահովության նախարարության «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1659-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաներին աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների անդամների սոցիալիզացիայի և սոցիալապահովության վերականգնողական աշխատանքներ, երեխայի նյութական ու կենցաղային պահանջների բավարարում, կրթությանն ու դաստիարակությանն օժանդակություն, ինչպես նաև առաջին բժշկական օգնության ծառայության տրամադրում:

2013 թվականի հունվարի 1-ից Երևանի «Զատիկ մանկատունը» դադարել է գործել որպես մանկատուն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Երևանի <<Զատիկ>> երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/ հաստատելու մասին N20-Ա/1 հրամանը, համաձայն որի ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է ցերեկային խնամք տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 100 երեխայի և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 3-18 տարեկան 20 երեխայի տրամադրել մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրվել է «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման Համաձայնագիր, որը ուժի մեջ է մտել 2011 թվականի դեկտեմբերի 28-ին: 2012 թվականին ըստ Համաձայնագրի նախապայմանների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է մի շարք աշխատանքներ, մասնավորապես, մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի դեկտեմբերի 27-ին հաստատվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշումը, որը բխում է Համաձայնագրի հավելում 2-ի հատուկ պայման 2-ի կատարման և ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1055-Ն որոշման հավելված 2-ի կետ 60-ի պահանջից:

2012 թվականին հանրապետությունում երեխաների խնամքի միասնական մոտեցումներ ամրագրելու նպատակով ՀՀ կրթության և գիտության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով

ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացվել է հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքների հիման վրա հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի (2012 թվականի հուլիսի 20-ի N 726-Ա) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (2012 թվականի հուլիսի 20-ի N 67-Ա/1) «Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար հատուկ ուսումնական հաստատություններում միասնական կառավարում և սոցիալական պաշտպանություն ապահովելու գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» համատեղ հրամանը: Վերը նշված աշխատանքները քննարկվել են Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում:

Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգը կառավարելու և համակարգելու գործառնություններն ուժեղացնելու նպատակով ընդունվել է ՀՀ «Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Վարչապետի որոշումը:

Առողջապահության ոլորտում մոր և մանկան առողջության պահպանման խնդիրները կարևորված են ազգային մակարդակում և որպես գերակայություն արտացոլված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ռազմավարական և ծրագրային մի շարք փաստաթղթերում:

Առողջապահության ոլորտում Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- Երեխաների և դեռահասների առողջության և սնուցման կարգավիճակի բարելավում, առողջ աճի և զարգացման ապահովում, պատվաստումներով ընդգրկվածության բարձր մակարդակի պահպանում և հիվանդությունների կանխարգելում, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցում, հաշմանդամության կանխարգելում:

- «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N1000-Ն որոշման և ՀՀ կառավարության 10.09.2009թ. N37 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարության ներդրման 2010-2015թթ. գործողությունների ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2014թ. համար բյուջեով նախատեսված ծրագրերի ներդրման ապահովումը:

Ծրագրի խնդիրն է՝

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով՝

ա/ Երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության կազմակերպումը լրիվ ծավալով: Այն իր մեջ ներառում է՝

տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից մինչև 18 տարեկան երեխաների զարգացման և առողջության հսկողությունն ու բուժօգնության իրականացումը, այդ թվում՝

- առողջ երեխայի հսկողությունը՝ աճի և զարգացման գնահատմամբ,
- հիվանդությունների կանխարգելման միջոցառումները՝ ներառյալ պատվաստումների իրականացումը, հիվանդությունների վաղ հայտնաբերումը և հիվանդ երեխայի բժշկական օգնությունը.
- ծնողների հետ տարվող առողջապահական կրթման և քարոզչական աշխատանքների իրականացումը՝ երեխայի խնամքի, սնուցման և հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:

բ/ Երեխաների նեղ մասնագիտական բուժօգնության իրականացումը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը:

գ/ Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում, ըստ անհրաժեշտության, երեխաների անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից:

դ/ Բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը՝ տարածքային սպասարկման պոլիկլինիկայի ղեկավարության և պատասխանատվության ներքո:

ե/ Երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացումը և ստոմատոլոգիական օգնության կազմակերպումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգի և ծավալների:

զ/ 15 տարեկան աղջիկների վերարտադրողական առողջության հետազոտումը, ըստ անհրաժեշտության՝ բուժօգնության կազմակերպումը:

է/ 14-15 տարեկան արական սեռի անձանց նախազորակոչային տարիքի պատանիների առողջական վիճակի գնահատումը և բուժօգնության կազմակերպումը լրիվ ծավալով:

ը/ Դիսպանսերային հսկողության և բուժման իրականացումը՝ պոլիկլինիկաների համապատասխան մասնագիտական կաբինետների և մասնագիտացված բժշկական հիվանդանոցների, կենտրոնների, միավորումների, համալիրների դիսպանսերային ստորաբաժանումների կողմից:

թ/ Արտահիվանդանոցային պայմաններում վերականգնողական բուժական ծառայությունների մատուցումը համապատասխան պայմաններ ունեցող վերականգնողական կենտրոններում (ստորաբաժանումներում):

2. Հիվանդանոցային բուժօգնության գծով՝

- երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական իրականացումը, ներառյալ մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը
- սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը՝ անկախ հիվանդության ախտորոշումից
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող առանձին հիվանդություններով (հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ

նորագոյացություններ, սեռավարակներ, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, ինֆեկցիոն հիվանդություններ և այլն) տառապող երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի նպատակային ծրագրին համապատասխան,

- մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում (որոնց ցանկերը հաստատվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից) բուժօգնության ապահովումը հիվանդանոցային բուժկազմակերպություններում,
- նորածնային սկրինինգների իրականացումը (ֆենիլկետոնուրիայի, բնածին հիպոթիրեոզի, լսողության և անհասության ռեթինոպաթիայի սկրինինգ)
- երեխաների արտագնա հիվանդանոցային անհետաձգելի բուժօնության ծառայությունների կազմակերպումը:

3. Վերականգնողական-առողջարանային բուժման գծով՝

- սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների (անկախ տարիքից) և մինչև 7 տարեկան խրոնիկ հիվանդ երեխաների (անկախ սոցիալական կարգավիճակից) վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը համապատասխան բուժկազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված ծավալներով:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հաշվարկային ցուցանիշի, տարածաշրջանում մանկական մահացությունների միտումների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանին հաջողվել է վերջին 15 տարվա ընթացքում 46 տոկոսով կրճատել մանկական մահացության ցուցանիշը:

Ըստ միջազգային փորձագիտական գնահատականների, 2005 թվականից Հայաստանը ճանաչված է որպես ԱՊՀ այն եզակի երկրներից մեկը, որին կհաջողվի շարունակաբար իջեցնել երեխաների մահացությունը և հասնել 2015 թվականի համար սահմանված հազարամյակի նպատակներին (ՄՄՑ իջեցում 2/3-ով), եթե այդ ոլորտում հետագայում ապահովվեն շարունակական զարգացումների նույն միտումները: Սակայն միտումների հետագա զարգացումների գնահատականը փաստում է, որ իրավիճակը մանկական մահացության անկման առումով վատացել է: Մինչև 2015 թվականը հարկ կլինի այն նվազեցնել ևս 43%-ով, ինչը ենթադրում է, որ 2015 թվականի համար սահմանված նպատակը դժվար հասանելի է և այն հնարավոր է միայն առկա ռեսուրսների համախմբման և այդ ոլորտում լրացուցիչ ներդրումների իրականացման պայմաններում:

Ըստ ԱՎԾ նախնական տվյալների, 2012թ. մանկական մահացության ցուցանիշը կազմել է 10,7‰, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ցածր է շուրջ 10 տոկոսով:

Այս ոլորտի ազգային ռազմավարությունը պետք է ուղղվի ունեցած հաջողությունների պահպանմանը և հետագա ներդրումների և զարգացումների ապահովմանը՝ որպես երեխաների առողջության բարելավման գրավական:

2011թ.-ին հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց և 2012թ. շարունակվում է իրականացվել երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը, որի ներդրման երաշխիք հանդիսացավ երեխայի

հիվանդանոցային բուժօգնության ծրագրի ֆինանսավորմանն ուղղվող բյուջետային միջոցների կրկնակի ավելացումը: Արդյունքում, հիվանդանոցային ծառայությունների իրականին մոտ արժեքի փոխհատուցման և բուժաշխատողների աշխատավարձի շուրջ 2 անգամ բարձրացման միջոցով հնարավորություն ստեղծվեց բարելավել երեխաների հիվանդանոցային օգնության մատչելիությունը և որակը, նվազեցնել համակարգում տեղ գտած ոչ պաշտոնական վճարումների գործելակերպը, իսկ վերջնական արդյունքում ակնկալել մանկական հիվանդանոցային մահաբերության կրճատում:

Ծրագրի ներդրման արդյունավետության այլընտրանքային գնահատման արդյունքները վկայում են ոչ պաշտոնական վճարների ավելի քան 4-5 անգամ կրճատման մասին: Հարցմանը մասնակից և հավաստագրերից օգտված մայրերի 79% Երևանում և 91% մարզերում նշել են, որ գոհ են մատուցված ծառայություններից, քանի որ ստացել են անվճար բուժօգնություն:

Երեխայի հավաստագրի ծրագրի ներդրման արդյունքում բարձրացել է երեխաների հիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը, ինչի ապացույցն է հիվանդանոցային դիմելիության զգալի աճը և հոսպիտալացման դեպքերի ավելացումը շուրջ 18%-ով:

Արագ արձագանքման արտագնա ծառայության միջոցով 2011թ.-ի ընթացքում անհետաձգելի բուժօգնություն է տրամադրվել մարզերի բուժհաստատություններին, կատարելով 285 կանչի սպասարկում (այդ թվում նորածնային), ինչը որոշակիորեն նպաստել է մանկական մահացության դեպքերի կրճատմանը:

Հանրապետության մարզերում ընդլայնվել են Երեխայի զարգացման գնահատման և վերականգնողական ծառայությունները, 2012թ. ընթացքում բացվել է ևս 2 մարզային կենտրոն՝ Կապանի ԲԿ-ում և Երևանի քաղաքապետարանի N9 մանկական պոլիկլինիկայում:

Շարունակում են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր, այդ թվում ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի, անհասության ռետինոպաթիայի և լսողության նորածնային սկրինինգի իրականացման ծրագրերը, որոնք թույլ են տալիս դեռ վաղ հասակից ձեռնարկել միջոցառումներ այս երեխաների բուժման ուղղությամբ և կանխարգելել դրանցով պայմանավորված հաշմանդամությունը:

Ընդլայնվել են բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերը, ընդ որում 2012թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը իրականացվել է

- բնածին հիպոթիրեոզ՝ 35144 հետազոտություն, հայտնաբերվել հիվանդ 14 երեխա, որոնք ստանում են անվճար բուժօգնության
- Ֆենիլկետոնուրիա՝ 20 006 հետազոտություն, հայտնաբերվել է հիվանդ 5 երեխա, որոնք ստանում են անվճար բուժօգնություն և հատուկ սնունդ
- Լսողության սկրինինգ՝ 8147 հետազոտություն, հայտնաբերվել է նեյրասենսոր ծանրալսողությամբ 12 երեխա, որոնց կիրականացվի լսողության պրոթեզավորում կամ ականջի խխունջի պատվաստում

– Անհատության ռեռոնոպաթիայի սկրինինգ՝ հետազոտվել է 654 անհաս երեխա, կուրության կանխարգելման նպատակով հայտնաբերված 7 երեխային կատարվել է լագերային վիրահատություն, 13-ին՝ դեղորայքային բուժում:

2013 թվականի ընթացքում շարունակաբար իրականացվում են ծրագրեր՝ երեխաների ստոմատոլոգիական խնդիրների առաջնային կանխարգելման, աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ու բուժման ուղղությամբ: Խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման շրջանակներում հաշմանդամ երեխաները ստացել և շարունակում են ստանալ առողջարանային վերականգնողական բուժում «Արարատ» մանկական առողջարանում, «Ապարան» առողջարարական կենտրոնում և «Օշական» առողջարանային-վերականգնողական կենտրոնում:

Շարունակաբար իրականացվում է «Իմունականխարգելման ազգային ծրագիրը», նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում հանրապետությունում նոր պատվաստանյութի ներդրման ուղղությամբ:

Մայրական մահացության իրավիճակը

Զգալի աշխատանք է կատարվել ծնունդների և մանկական մահացության գրանցման գործընթացի բարելավման ուղղությամբ:

Վերջինիս միջին եռամյա ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ Հայաստանում վերջին 15 տարվա ընթացքում մայրական մահացության մակարդակը շարունակաբար իջել է: Մայրական մահացության Հայաստանի ցուցանիշն ավելի ցածր է ԱՊՀ և տարածաշրջանի երկրների միջին մակարդակից, սակայն 4 անգամ բարձր է եվրոպական երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակից: Կատարվել են աշխատանքներ՝ ծննդոգնության բուժհաստատությունների ըստ մակարդակների դասակարգման, ուղեգրման համակարգի բարելավման, բարձր ռիսկի խմբի հղիների նախաձեռնողյան խնամքի և ծննդոգնության ծառայությունների որակի, մատչելիության ապահովման ուղղությամբ, ինչը միտված է նվազեցնել մայրական մահացության դեպքերը:

2011թ.ընթացքում արձանագրվել է մայրական մահացության 4 դեպք: 2006-2008թթ.մայրական մահվան միջին եռամյա ցուցանիշը կազմել է 28,2/100 000 կենդանածնության հաշվով, իսկ 2009-2011թթ.համանուն ցուցանիշը կազմել է 15,7, այսինքն կրճատվել է մոտ 1,7անգամ:

Համաձայն ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ.կատարած հետազոտության նախնական զեկուլցի տվյալների նախաձեռնողյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը աճել է 6%-ով և դարձել է 99%, իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99.4%:

2013 թվականի անցած ամիսների ընթացքում շարունակաբար մշտադիտարկման է ենթարկվել ծննդոգնության և երեխայի պետական հավաստագրի ծրագրերով իրականացման աշխատանքները, որոնք ուղղված են երեխաների և կանանց համար առավել մատչելի և իրապես անվճար ծառայությունների մատուցմանը:

Երեխայի իրավունքների հիմնական բաղկացուցիչներից է կրթությունը:

Կրթությունը հանդիսանում է պետական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու՝ իր հակումներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթությունը՝ հասարակության և հանրապետության տնտեսության արդի կարիքներին ու պահանջներին համապատասխան:

Տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- բարելավել նախադպրոցական կրթության ծառայությունների որակն ու մատչելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը,
- ընդլայնել դպրոցահասակ երեխաների, ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ հանրակրթական դպրոցներում,
- նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ծրագրի խնդիրն է՝

- մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար,
- ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների (խմբերի) մասնակցությունը միջազգային օլիմպիադաներին, ստուգատեսներին, մրցույթներին և այլ միջոցառումներին,
- ստեղծել նպաստավոր պայմաններ շնորհալի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման համար,
- ընդլայնել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցը:
Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով ընդունվել է «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենքը, որի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:

Հայաստանն այսօր որդեգրել է միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու քաղաքականություն, որը ենթադրում է կրթության կառուցվածքի և բովանդակության համապատասխանեցում ժողովրդավարական հասարակության ու շուկայական տնտեսության պահանջներին: Հատկապես ընդգրկուն է համագործակցությունը հանրակրթության ոլորտում, ուր իրականացվող բարեփոխումների արդյունքում անցում է կատարվում 12-ամյա միջնակարգ կրթակարգին: Հաստատվել է հանրակրթության նոր չափորոշիչը, մշակվել են նոր առարկայական չափորոշիչներ ու ուսումնական ծրագրեր: Ձևավորվել է առանձին

գործող ավագ դպրոցների ցանցը, որում ներառված է 105 ավագ դպրոց: Ներդրվել է սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգը, բոլոր առարկաների գծով անցկացվում են ավարտական և բուհի ընդունելության միասնական քննություններ: Շարունակվել են դպրոցները համակարգչային սարքավորումներով համալրման աշխատանքները, ստեղծվել են համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր և այլն:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ 2010 թվականի հոկտեմբերի 1-ից սկսել է «Դպրոցական սնունդ» եռամյա ծրագիրը: Ծրագրով նպատակադրված է աջակցել ՀՀ 6 մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ ուսումնական տարվա ընթացքում տարրական դպրոցում սովորողների համար կազմակերպելու մեկանգամյա սնունդ: 2012 թվականին ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերի 50%-ը հոգացել է ՀՀ կառավարությունը, իսկ 2013 թվականից ծրագիրը ՀՀ կառավարությանն է փոխանցվել ամբողջությամբ՝ այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից կատարելով համապատասխան հատկացումներ:

Առաջընթաց է նկատվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր հանրակրթական դպրոցներում ներգրավելու գործում: 2013 թվականին ներառական կրթություն իրականացվելու է հանրապետության 101 հանրակրթական դպրոցներում: Միաժամանակ ներառական կրթության փորձնական ծրագիր է իրականացվում Տավուշի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում: Նախարարության ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով կընդլայնվեն հանրակրթական դպրոցներում և համայնքներում հատուկ մանկավարժական, սոցիալական, հոգեբանական ծառայությունները: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

Նախադպրոցական կրթության ոլորտում ՀՀ կրթության և գիտության նախարարության քաղաքականությունն ուղղված է առկա ներուժի պահպանմանը, դրանց զարգացման նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ-ում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա էլ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի նոյեմբերի 4-ին հաստատվել է «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» N1427-Ն որոշումը: Նշված իրավական ակտերով ՀՀ կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է

ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Նախատեսվում է այդ խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015 թվականին հասցնել 90 տոկոսի, որին հասնելու համար անհրաժեշտ է տարեկան մոտավորապես 7 տոկոսի չափով ընդգրկվածության մակարդակի աճ:

Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործել են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչ 2011 թվականը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

Ոլորտին աջակցելու և ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձական ծրագիր իրականացնելու համար: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը՝ դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝ 2013 թվականին կիրականացվի 82 միկրոծրագիր: Նախադպրոցական ծրագրերի (բացառությամբ Երևանում իրականացվելիք ծրագրերի) շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Սկսած 2011 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման համար: 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ հատկացվել են 4, 2012 թվականին՝ 8, իսկ 2013 թվականին՝ 9 մարզի:

Անշուշտ կարևորվում է նաև դաստիարակության համակարգի զարգացումը, ուսուցման ու դաստիարակության միասնականության ապահովումը: Այստեղ առանձնահատուկ շեշտադրում է արվել սովորողների համար՝ ըստ հետաքրքրությունների գործունեություն ծավալելու հնարավորությունների ընձեռմանը և լրացուցիչ կրթության ապահովմանը:

Անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» և «Կենսաբանություն» առարկաներից:

Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում իրականացվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցում, սովորողները ձեռք են բերել առողջ ապրելակերպի գիտելիքներ ու կյանքի հմտություններ:

Ամառային ճամբարներում ու հանգստյան տներում կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4500 երեխայի ամառային հանգիստը:

Հանրակրթական դպրոցների շուրջ 72500 աշակերտների համար անցկացվել են ամենամյա հանրապետական սպորտային խաղեր՝ 7 մարզաձևերից: Մարզական խաղերի միջմարզային և հանրապետական փուլերին մասնակցել է շուրջ 2750 աշակերտ:

Հանրապետության տարբեր մարզերում կազմակերպվել են դպրոցականների գեղագիտական ստեղծագործության մրցույթ-փառատոներ, ինչպես նաև նկարչական հանրապետական մրցույթներ, իսկ լավագույնները մասնակցել են նաև միջազգային մրցույթների:

Նշված բոլոր ուղղություններով աշխատանքները կշարունակվեն նաև 2014 թվականին:

Երեխայի իրավունքների բաղկացուցիչ մաս է կազմում նրա գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումը:

«Մշակույթի ոլորտում երեխայի իրավունքների բաղկացուցիչ մաս է կազմում նրա գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումը:

ՀՀ մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով մշակել և ՀՀ կառավարության հաստատման է ներկայացրել «Գեղարվեստական կրթության հայեցակարգը»: Այն հաստատվել է ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի N 47 արձանագրային որոշմամբ: Հայեցակարգը արտացոլում է մշակույթի և արվեստի բնագավառում քաղաքացու և մարդու հետևյալ իրավունքներն ու ազատությունները.

ա) մշակութային կյանքին մասնակցելու, մշակութային գործունեություն իրականացնելու.

բ) մշակութային արժեքներին հաղորդակցվելու.

գ) ստեղծագործական գործունեություն իրականացնելու.

դ) գեղարվեստական կրթություն ստանալու և այդ կրթության ձևերն ու միջոցները ընտրելու:

Անհատի զարգացմանն ուղղված մշակութային ծրագրերի իրականացմամբ ապահովվում է մշակութային կրթության մատչելիությունը և որակը, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. նոյեմբերի 15-ի նիստում հավանության է արժանացել «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագիրը», որով նախատեսվում է ապահովել երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում դասավանդող մանկավարժների վերապատրաստման և համալրման գործընթացների, նյութատեխնիկական բազայի համալրման և արդիականացման աշխատանքների իրականացման շարունակականությունը, ծրագրային, մեթոդական և ուսումնական գործընթացի կատարելագործումը, գեղագիտական դաստիարակության պետական միասնական քաղաքականությունը:

Երեխաների հանգիստը, ժամանցը և մշակութային կյանքը կազմակերպելու ուղղությամբ իրականացվել են.

ա) Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 589-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով նախատեսված է «Երեխաների համար ուսուցման մատչելի պայմանների ստեղծում (նպատակային պետպատվերի տեղադրում՝ առաջնայնությունը տալով ազգային նվագարաններին)» միջոցառումը, որի իրականացման համար ՀՀ մշակույթի նախարարության կողմից ներկայացվել է «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը (հաստատվել է ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ): 2007 թ. ուսման վարձավճարների փոխհատուցում ստացել են ՀՀ 134 դպրոցների 1993 սովորողներ: Ծրագրի իրականացման ընթացքում մի շարք դպրոցներում վերաբացվեցին ազգային նվագարանների բաժինները: Ազգային նվագարանների ուսման վարձավճարների փոխհատուցումը ոչ միայն հնարավորություն տվեց ապահովել ուսուցման մատչելիությունը, այլև դպրոցները կարողացան լուծել մի շարք հիմնախնդիրներ՝ նոր գործիքների, ուսումնական գրականության ձեռքբերում, ուսուցիչների վարձատրության հավելավճարներ և այլն: 2008 թ. ուսման վարձավճարների փոխհատուցում են ստացել 139 դպրոցների 2062 սովորողներ:

2009-2012 թթ. ուսման վարձավճարի փոխհատուցում է տրամադրվել ոչ միայն ազգային, այլև լարային և փողային նվագարանների բաժիններում սովորողներին: 2009-2010 թթ. ծրագրում ընդգրկվել են 141 դպրոցների 2443 սովորողներ, որից՝ 2082 ազգային, 100 լարային և 261 փողային նվագարանների բաժիններում սովորողներ: 2011-2012 թթ. ծրագրում ընդգրկված են 144 դպրոցների 2443 սովորողներ, որից՝ 2004 ազգային, 164 լարային և 275 փողային նվագարանների բաժիններում սովորողներ, ավելացել է վարձավճարի փոխհատուցման չափը:

բ) ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծվել է ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկ, որտեղ ներառվել են Երևան քաղաքի և ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մոտ 560 շնորհալի երեխաներ: Շնորհալի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանն է ուղղված միջազգային մրցույթներին և փառատոների տեղեկատվական բանկերում ընդգրկված երեխաների մասնակցությանը աջակցության ցուցաբերումը, մասնավորապես՝ 2008-2012 թթ. վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են 246-ից ավելի շնորհալի երեխաներ և պատանիներ:

գ) Մեթոդական աշխատանքների կազմակերպման նպատակով 2009 թ. 10 մարզերում գործում են մարզային մեթոդական կենտրոնները (հանրապետական մեթոդական կենտրոնի մասնաճյուղերը), որոնք տեղակայված են այդ նպատակով ընտրված հենակետային դպրոցներում (ամեն մարզում՝ մեկական երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, ընդհանուր՝ 33 դպրոց): Հենակետային դպրոցներում տվյալ մարզի բոլոր դպրոցների համար կազմակերպվում են մեթոդական աշխատանքներ՝ նոր ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ներդրում, խորհրդատվություն, առաջավոր փորձի փոխանակում, վարպետության և վերապատրաստման դասընթացների կազմակերպում: 2010-2012 թթ. շարունակվել է պե-

տական պատվերի շրջանակներում հրատարակված նոր ուսումնական և մեթոդական ձեռնարկների, դասագրքերի անվճար բաշխումը մարզերում գործող դպրոցներին:

դ) Գեղարվեստական գրականության, մանկական գրադարանների և մամուլի զարգացման նպատակային ծրագրեր, մանկական գեղարվեստական գրքերի հրատարակման, գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ գրահրատարակչության բնագավառում իրականացվում են «Գրականության գծով պետական պատվեր» և «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվում է «Մանկական գրականություն» ենթածրագիրը: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում հրատարակվել է 2009 թ.՝ 25, 2010 թ.՝ 30, 2011 թ.՝ 13, 2012 թ.՝ 14 գիրք: 2008 թ. գումարներ են հատկացվել երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքների իրականացման, ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար: 2009 թ. հրատարակվել է 21, 2010 թ.՝ 35, 2011 թ.՝ 31, 2012 թ.՝ 26 անուն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների, ուսումնական և գիտաուսումնական գրականություն: Հրատարակված գրականությունն անվճար տրամադրվում է հանրապետության բոլոր համայնքների երաժշտական և արվեստի դպրոցներին:

2010 թ. մշակվել, իսկ 2011 թ. հաստատվել են հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների համար միասնական օրինակելի ուսումնական պլաններ:

Ներկա իրավիճակի համառոտ նկարագիրը

Հանգստի և ժամանցի կազմակերպմանն ուղղված ծրագրերի իրականացում

Երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ կազմակերպելու համար իրականացվել է.

ա) «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում մայրաքաղաքի և մարզկենտրոնների թանգարաններ, պատկերասրահներ, համերգային և այլ մշակութային կազմակերպություններ» ծրագիրը, որի հիմնական նպատակն է նպաստել երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը: Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2008 թվականից:

բ) «ՀՀ մարզերում շնորհալի երեխաների ու պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում» ծրագիրը, որը նպատակաուղղված է երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորող երեխաների մասնագիտական կրթական ծրագրերի առավել արդյունավետ ուսուցմանը, վարպետության դասընթացների միջոցով ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ծրագրի իրականացմանը:

գ) Երեխաների հանգիստի և բազմաբովանդակ ժամանցի միջոցառումներ իրականացնելու նպատակով ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության Հայաստանի պետական ֆիլիարմոնիային կից 2007 թ. հիմնվեց «Դպրոցականի

Ֆիլիարմոնիան»: 2007-2012 թթ. Դպրոցականի ֆիլիարմոնիան կազմակերպել է շուրջ 156 համերգներ և տարաբնույթ այլ միջոցառումներ, որոնք ոչ միայն նպաստում են երեխաների հանգիստը բազմաբովանդակ անցկացնելուն, այլև ունեն ուսուցողական և աշխարհայացքի ընդլայնման բնույթ:

Ծրագիրը նպատակաուղղված է.

ա. երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությանը և բազմակողմանի զարգացմանը.

բ. դասական երաժշտության, ժողովրդական արվեստի, գեղանկարչության, թատրոնի հետ հաղորդակցմանը:

Պատանի ստեղծագործողների համար հանրապետական ու միջազգային մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում

ա) «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթ, որի նախնական ընտրական փուլին մասնակցում են բոլոր մարզերի մանկական երգչախմբերը (երաժշտական և հանրակրթական դպրոցների): Մարզերում լավագույնը ճանաչված երգչախմբերը մասնակցում են մայրաքաղաքում կազմակերպվող մրցույթի եզրափակիչ փուլին:

բ) Մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, ինչպես նաև մայրաքաղաքից դեպի մարզեր մշակութային կյանքի ապակենտրոնացման նպատակով ՀՀ մշակութային նախարարության կողմից կազմակերպվում են մի շարք թատերական փառատոներ ՀՀ մարզերում: Փառատոներին մասնակցում են տիկնիկային թատերախմբեր ոչ միայն Երևանից և ՀՀ մարզերից, այլև Ջավախքից և Արցախից:

գ) Վերոհիշյալ նպատակներին էր ուղղված նաև 2008 թ. անցկացվող ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնի կազմակերպումը, որտեղ ներկայացվում են Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթը, ազգային երգն ու պարը: Փառատոնին մասնակցում են ՀՀ-ում բնակվող 11 ազգային միությունների ներկայացուցիչներ (այդ թվում նաև՝ մանկական համույթներ): Փառատոնի իրականացումը շարունակական է:

Պետական աջակցություն սոցիալապես անապահով և հաշմանդամ երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում

ՀՀ մշակութային նախարարության ենթակայությամբ գործող «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում Երևանի 5 և Վանաձորի 2, Սպիտակի, Գավառի, Գյումրու 5 մասնաճյուղերի գիշերօթիկ հատուկ դպրոցներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով 614 երեխաներ ստանում են արվեստի և արհեստների անվճար ուսուցում: Կենտրոնի կողմից երեխաներին անվճար տրամադրվում են նյութեր, գործիքներ, իսկ դասընթացի ավարտից հետո՝ վկայականներ: Կազմակերպվում են նաև համերգներ, ցուցահանդեսներ:

Մանկական կինոյի և թատրոնի զարգացման նպատակային ծրագրեր

- *Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոն*

Մանկապատանեկան թատրոնների «Նոան հատիկ» հանրապետական փառատոնի անցկացումը նպաստում է մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը: Փառատոնը ավանդաբար անցկացվում է 2001 թվականից: 2001-2010 թթ. եզրափակիչ փուլերին մասնակցել է շուրջ 191 թատերախումբ և բեմականացվել է ավելի քան 300 ներկայացում: 2011 թ. «Նոան հատիկ» մանկապատանեկան 11-րդ թատերական փառատոնին մասնակցել է 35 թատերախումբ (36 ներկայացում, 12000 հանդիսատես): 2012 թ. (Հայ գրատպության 500-ամյակին նվիրված) մասնակցել է 36 թատերախումբ (37 ներկայացում, 10000 հանդիսատես):

- *«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային թատերական փառատոն Դսեղում*

2005 թ. ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղում կազմակերպվում է թատերական այս փառատոնը: 2008 թ. փառատոնին մասնակցել են 14 թատերախմբեր Հայաստանից և արտերկրից: 2006-2011 թթ. փառատոնին մասնակցել են 22 հայկական և 17 արտասահմանյան երկրներից տիկնիկային թատրոններ, թատերախմբեր, վարպետության դասեր անցկացնող աշխարհահռչակ տիկնիկային գործիչներ: 2012 թ. մասնակցել են 9 երկրներ և ցուցադրվել է 37 ներկայացում:

- *Մանկական մուլտֆիլմերի նկարահանում*

Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը նպաստում է մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը: Տարեկան պետական աջակցությամբ երեխաների համար նկարահանվում են 4-5 մուլտֆիլմեր:

- *Մանկապատանեկան կինոյի և անիմացիայի փառատոն*

Փառատոնին մասնակցում են Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից կինոգործիչներ, այդ թվում նաև պատանի ստեղծագործողներ: Ծրագիրն իրականացվում է 2001 թվականից և այն կրում է շարունակական բնույթ:

2006 թ. փառատոնը ֆինանսավորվում է ՀՀ մշակույթի նախարարության կողմից: Տարեցտարի ընդլայնվում են ստեղծված ծրագրերը (2006 թ.՝ 1, 2012 թ.՝ 6), որոնք ունեն մշակութային, կրթական, սոցիալական ուղղվածություն, համարվում են նոր ծրագրերով, միջոցառումներով (2006 թ.՝ 14, 2012 թ.՝ 42), ինչպես նաև ընդլայնվում են փառատոնի աշխարհագրական սահմանները՝ ավելանում են մասնակից ֆիլմերը (2006 թ.՝ 28, 2012 թ.՝ 105), արտերկրից ժամանող հյուրերի քանակը (2006 թ.՝ 23, 2012 թ.՝ 52) և անվանակարգերը (2006 թ.՝ 2, 2012 թ.՝ 13):

Մշակույթի ոլորտում Տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները **Ծրագրի նպատակն է՝**

1) հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծման շարունակականության ապահովումը.

2) արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանումն ու զարգացումը, համապատասխանեցումը նոր տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին.

3) տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտումը, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովումը.

4) մանուկների և պատանիների հաղորդակցում ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին.

5) արվեստի բարոյական ներուժի իրացում՝ որպես մանուկների և պատանիների բարձրագույն նպատակների, բարոյական սկզբունքների ձևավորման ու զարգացման նախապայման.

6) սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կրթության մատչելիության ապահովումը.

7) Երեխաների բազմաբովանդակ հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպումը.

8) Երեխաների մշակութային մասնագիտական ուսուցմանը և գեղագիտական դաստիարակությանը պետական աջակցության ցուցաբերումը.

Շրագրի խնդիրն է՝

- գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովում՝ նյութատեխնիկական բազայի և երաժշտական գործիքների համալրմամբ, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացմամբ, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի մշակմամբ,

- ուսուցման մատչելիություն արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում՝ մասնավորապես սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մշակութային կրթության ապահովմամբ,

- երեխաների բազմաբովանդակ հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպում,

- երեխաների ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծում,

- հաղորդակցում ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին,

- շնորհալի երեխաների բացահայտում և հետագա ուսուցման գործընթացում աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ համապատասխան խորացված մշակութային նախնական մասնագիտական կրթություն ստանալու պայմանների ստեղծում:

Ակնկալվող արդյունքը

ա. կրթված և ստեղծագործող, մտավոր զարգացած սերնդի ձևավորում,

բ. մշակույթի պահպանման և զարգացման նպատակով գեղագիտորեն զարգացած և շահագրգիռ լսարանի ստեղծում,

գ. արվեստի բնագավառի մասնագիտական կրթության ավանդույթների պահպանում և հետագա զարգացում,

դ. մանուկների և պատանիների հաղորդակցում ազգային և համաշխարհային արվեստին,

ե. գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության իրականացման միջոցով պատանիների բարձրագույն նպատակների, բարոյական սկզբունքների, գեղագիտական ճաշակի ձևավորում,

զ. ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության հաղորդակցում և ուսումնասիրում,

է. մշակութային կյանքին պատանիների մասնակցության պայմանների ապահովում,

ը. տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտում, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովում:

Ռազմավարություն

Երաժշտական և արվեստի դպրոցներին պետական աջակցության շարունակականության ապահովում:

Նպատակային ծրագրերի իրականացում մանկական թատրոնի, կինոյի, գրադարանների զարգացման ասպարեզում:

Հաշմանդամ երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի գործունեության ընդլայնում:

Ծրագրերի մշակում ուղղված հատուկ կարիք ունեցող երեխաների ինտեգրման խնդրին:

Պետական աջակցություն՝ սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում:

Մշակութային ծրագրերի իրագործման ընթացքում համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ::

IV. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2014 թվականի ընթացքում իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2014 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից՝ նրանց խնամքի, բուժման և դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման, ֆիզիկական և մտավոր բնականոն զարգացման, հոգեբանական վերականգնման և արդյունավետ սոցիալականացման նպատակով:

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2013 թ.
 սեպտեմբերի 28-ի նիստի N 39
 արձանագրային որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատանը կխնամվի 745 երեխա	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2 253 309.9 հազ. դրամ
2.	Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 8 գիշերօթիկ հաստատությունում կխնամվի 800 երեխա	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 1 041 239.6 հազ. դրամ
3.	Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և	Հայաստանի Հանրապետության աշխատանքի	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

	ծառայություններ	սոցիալական հարցերի նախարարություն	սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնում 300 երեխայի կտրամադրվեն համապատասխան ծառայություններ		224 456.0 հազ. դրամ
4.	Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն խորհրդատվություն	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	<Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին> ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 12 շահառուի:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 16 331.4 հազ. դրամ
5.	ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրի շրջանակներում ընտանիք կվերադառնա 50 երեխա, կկանխարգելվի 50 երեխայի մուտքը հաստատություններ	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 22 146.2 հազ. դրամ

6.	Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգաձության ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տավուշի մարզում <Հուլիսի կամուրջ> ՀԿ-ի 4 ցերեկային կենտրոնում՝ Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի և նրանց հարակից գյուղերի՝ հաշմանդամություն կամ սոցիալ-հոգեբանական խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող շուրջ 250 երեխայի մատուցվող ծառայությունների համար կտրամադրվի աշխատավարձ:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 63 333.6 հազ. դրամ
7.	Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Խնամատար ընտանիքումներում կիրականացվի 25 երեխայի խնամքը	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 36 073.9 հազ. դրամ
8.	Հայաստանի Հանրապետության մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում:	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 219 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի/	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6 300.0 հազ. դրամ
9.	«Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման» ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի	Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 37 651.2 հազ.

		նախարարություն	3-18 տարեկան 20 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:		դրամ
10.	Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտների կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրի 35 շահառուի տրամադրվի կրթաթոշակ և միանվագ դրամական օգնություն»:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2 800.0 հազ. դրամ
11.	Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կենսաբանական 100 ընտանիքի կտրամադրվի դրամական օժանդակություն	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 16 402.4 հազ. դրամ
12.	Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացում	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը:	2014թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում

13.	<p>Հայաստանի Հանրապետությունում <Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգի> համաձայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարաններ տրամադրելու նպատակով կենտրոնացված հաշվառման իրականացում</p>	<p>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարաններ տրամադրելու նպատակով կենտրոնացված հաշվառումը:</p>	2014թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
14.	<p>Երեխաների հիվանդանոցային բուժօգնության բարելավման ազգային ռազմավարության ներդրման 2013-2015 թթ. գործողությունների ծրագրով 2014 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Երեխաների հիվանդանոցային բուժօգնության բարելավման ազգային ռազմավարությամբ 2014 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում</p>	2014թ. ընթացքում	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ 7 140 614.5 հազ. դրամ</p>
15.	<p>Երեխաներին և դեռահասներին անհրաժեշտ բուժօգնության ծավալների ապահովում՝ պետական նպատակային ծրագրի շրջանակներում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Նպատակային ծրագրերին համապատասխան երեխաների և դեռահասների համար ապահովված է մատչելի և որակյալ բուժօգնություն</p>	2014թ. ընթացքում	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /պետական բյուջեով նախատեսված համապատասխան ծրագրերի շրջանակներում/</p>

16.	Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում երեխաների առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Յուրաքանչյուր տարի 0-7 տարեկան շուրջ 300 000 երեխա ըստ անհրաժեշտության հնարավորություն կունենաստանալ մատչելի և որակյալ հիվանդանոցային բուժօգնություն:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե /պետական բյուջեով նախատեսված համապատասխան ծրագրի շրջանակներում/, օրենքով չարգելված այլ աղբյուրներ.
17.	Իմունականիսարգելման ազգային ծրագրի շարունակական իրագործում, ՀՀ կառավարության կողմից հաստատված գործողությունների ծրագրին համապատասխան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Իմունիզացիայի ընդգրկման բարձր մակարդակի ձեռքբերում և պահպանում (առանձին պատվաստումների 95% և ավելի մակարդակի ապահովում):	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ 655 840.3 հազ. դրամ
18.	Հաշմանդամ երեխաների համակարգված բուժօգնության և սպասարկման բարելավման ծրագրեր և միջոցառումներ: Վերականգնողական մարզային կենտրոնների ծրագրի ընդլայնում:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ 198 000.0 հազ. դրամ

19.	Ծննդոգնության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Տարեկան շուրջ 45 000 կին կստանա ծննդոգնության մատչելի և որակյալ ծառայություններ:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6 759 886.6 հազ. դրամ
20.	Երեխաների սնուցման բարելավման ազգային ռազմավարության և 2013-2015 թթ. գործողությունների ծրագիրը մշակելը և ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երեխաների սնուցման բարելավման ազգային ռազմավարության և 2013-2015 թթ. գործողությունների ազգային ծրագիրը մշակված է, ներդրման գործընթացը սկսված է:	2014թ. ընթացքում	Օենքով չարգելված այլ աղբյուրներ
21.	<<Հայաստանի Հանրապետությունում միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշման միջոցառումների ցանկից բխող շարունակական աշխատանքներ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	<<Հայաստանի Հանրապետությունում միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշման միջոցառումների ցանկից բխող 2014 թվականի համար նախատեսված	2014թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			<p>միջոցառումների իրականացում</p> <p><input type="checkbox"/> Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից</p> <p><input type="checkbox"/> Ցորենի ալյուրի հարստացման մասին <input type="checkbox"/> ՀՀ օրենքի ընդունումից հետո:</p>		
22.	<<Մանկանր բարեկամ>> նախաձեռնության շարունակական ներդրում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Վաղ հասակի երեխաների սնուցման կազմակերպման գործընթացը բարելավված է՝ բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճ շուրջ 5 տոկոսով	2014թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

<p>23.</p>	<p>Նախաձեռնողի ինստիտուտի և բուժօգնության ծառայությունների բարելավում՝</p> <p>1) նորաձեռնային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, անտենատալ սկրինինգների ներդրում,</p> <p>2) հղիության վաղ հաշվառման և նախաձեռնողի հսկողության ծառայությունների մատչելիության և որակի բարելավում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Նախաձեռնողի վաղ հսկողության ցուցանիշի բարձրացում շուրջ 10 տոկոսով:</p> <p>Ցածր քաշով նորաձեռնողների ցուցանիշի նվազեցում շուրջ 5 տոկոսով</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> <p>1 572 423.4 հազ. դրամ</p>
<p>24.</p>	<p>Նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորաձեռնային սկրինինգ ծրագրերի շարունակականության ապահովում և ընդլայնում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ժառանգական և զարգացման բնածին ախտաբանություններով պայմանավորված հաշմանդամության կրճատում շուրջ 3 տոկոսով</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p> <p>1 800 945.0 հազ. դրամ</p>

<p>25.</p>	<p>Հանրապետության բոլոր մարզերում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում՝ դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան</p>	<p>Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ծախսարդյունավետ մոդելների ներդրման միջոցով հանրապետության 10 մարզում ընդգրկվել է 6172 երեխա, այդ թվում՝</p> <p><<Կրթության որակ և համապատասխանություն >> վար կային ծրագրի 80 նախադպրոցական միկրոծրագրերի շրջանակ ներում ընդգրկվել է շուրջ 1600 երեխա, ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ հանրապետության 10 մարզում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է 4572 երեխա:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 518 898.7 հազ. դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
------------	---	---	---	-------------------------	---

<p>26.</p>	<p>Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և կրթության մեջ ներառման մեխանիզմների մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>ՀՀ հանրակրթական բոլոր դպրոցներում գործում է <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը>>, որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր աշակերտի մասին հավաքագրված անձնավորված տեղեկատվությունը կուտակել մեկ միասնական տեղեկատվական շտեմարանում, բացառելով նույն աշակերտի բազմակի հաշվառումը, նվազեցնելով տեղեկատվության անճշտությունների և միտումնավոր սխալների քանակը, ինչպես նաև վերահսկել աշակերտի դպրոցից դպրոց տեղափոխության գործընթացը:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
------------	---	--	---	-------------------------	--

27.	<p>Հոսքային ուսուցման կազմակերպում՝ սովորողների նախապիրություններին և հակումներին համապատասխան</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Հանրապետության առանձին գործող 105 ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների 3-րդ աստիճանում իրականացվում է հոսքային ուսուցում՝ հումանիտար, բնագիտա մաթեմատիկական, արհեստագործական և ընդհանուր հոսքերում:</p>	2014թ. ընթացքում	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե</p>
28.	<p><<Ներառական կրթություն>> ծրագրի իրականացում 101 դպրոցներում</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան</p>	<p>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովվել է կրթության մատչելիություն և հավասար պայմաններ, մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող շուրջ 3000 երեխայի կրթությունը կազմակերպվել է հանրակրթական դպրոցներում:</p>	2014թ. ընթացքում	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 1 665 995.8 հազ. դրամ</p>

<p>29.</p>	<p>Դատապարտված երեխաների կրթության և նախնական մասնագիտական կրթության որակի բարձրացում</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Ապահովվել է դատապարտված երեխաների կրթության իրավունքը, այս նպատակով <<Աբովյան>> քրեակատարողական հիմնարկում գործող Աբովյանի N2 արհեստագործական պետական ուսումնարանում ներդրվել է երկու նոր մասնագիտություն՝ <<Հաշվետարություն>> և <<Համակարգիչների շահագործում>>:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>30.</p>	<p>Դպրոցական օլիմպիադաների կազմակերպում (16 առարկաներից՝ հանրապետական և 7 առարկա ներից՝ միջազգային օլիմպիադաների մասնակցություն)</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են հանրապետական օլիմպիադաներ 16 առարկայից, իսկ լավագույնները մասնակցել են միջազգային օլիմպիադաների 7առարկայից:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 59 688.0 հազ. դրամ</p>

31.	Դպրոցականների սպարտակիադաների կազմակերպում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հանրակրթական դպրոցների շուրջ 72500 աշակերտի համար անցկացվել են ամենամյա հանրապետական սպորտային խաղեր 6 մարզաձևով: Մարզական խաղերի միջմարզային և հանրապետական փուլերին մասնակցել են շուրջ 2746 աշակերտ::	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 35 000.0 հազ. դրամ
32.	Դպրոցականների գեղարվեստական ստեղծագործության փառատոնի կազմակերպում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հանրապետության բոլոր մարզերում կազմակերպվել են դպրոցականների գեղագիտական ստեղծագործության մրցույթ-փառատոներ, նկարչական հանրապետական ու միջազգային մրցույթներ, ինչպես նաև նկարչական հանրապետական մրցույթներ, իսկ լավագույնները մասնակցել են նաև միջազգային մրցույթների:	2014թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

33.	<p>Հանրակրթական դպրոցներում ապրելակերպ» իրականացում</p> <p style="text-align: right;">«Առողջ դասընթացի»</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում սովորողների համար անցկացվել են առողջ ապրելակերպի դասընթացներ, սովորողները ձեռք են բերել կյանքի հմտություններ:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
34.	<p>Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Ամառային ճամբարներում կազմակերպվել են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4500 երեխայի ամառային հանգիստը:</p>	<p>2014թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 37 4211.0 հազ. դրամ</p>

35.	Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով համապատասխան մանկավարժների վերապատրաստում	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Վերապատրաստումները նպաստել են մանկավարժների կողմից՝ սովորողների մասնագիտական կողմնորոշման աջակցության գործընթացի արդյունավետության բարձրացմանը:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
36.	Երաժշտական և արվեստի դպրոցներում «Ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցում» ծրագրի իրականացում:	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	ՀՀ 144 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, փողային և լարային նվագարանների բաժինների 2443 սովորող կստանան ուսման վարձավճարների փոխհատուցում, ինչը կնպաստի գեղարվեստական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլորտի հետագա մասնագետներով համալրմանը:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 474 500.4 հազ. դրամ

37.	Պատանի ստեղծագործողների համար մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Պատանի ստեղծագործողների համար մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպմամբ կբացահայտվեն շնորհալի երեխաներ, որոնց հետագա ուսուցման գործընթացում և ստեղծագործական գործունեությանը կցուցաբերվի աջակցություն:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 24 000.0
38.	Գեղարվեստական գրականության, մանկական գրադարանների զարգացման նպատակային ծրագրեր, մանկական գեղարվեստական գրքերի հրատարակում, գրադարանային ֆոնդի համալրում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Մանկական գրականության հրատարակումը կնպաստի մանուկների աշխարհա-յացքի ձևավորմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների սերմանմանը, գրադարանների մանկական գրականության համալրմանը:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 9 390.0

39.	<p>Մանկապատանեկան թատրոնների զարգացման նպատակային ծրագրեր, այդ թվում՝</p> <p>«Թումանյանական հեքիաթի օր» տիկ-նիկային միջազգային փառատոն</p>	<p>Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն</p>	<p>«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառատոների անցկացումը կնպաստի մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը:</p>	<p>2014 թ. ընթացքում</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 3 900.0 հազ. դրամ</p>
-----	--	--	---	------------------------------	--

40.	Մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոն /«Աջակցություն մանկապատանեկան միջոց-ցառումներին»/ ծրագիր	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Փառատոնը կնպաստի մանկական կինոյի զարգացմանն ու հանրահռչակմանը, երեխաների հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 1 900.0 հազ. դրամ
41.	Պետական աջակցություն հատուկ կարիքներով, սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ոլորտում՝ Երևանի 5, Վանաձորի 2, Գյումրու 2, Գավառի, Սպիտակի, Ստեփանավանի մասնաճյուղերի գիշերօթիկ հատուկ դպրոցներում արվեստների և արհեստների ուսուցում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	ՀՀ մշակույթի նախարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում Երևանի 5, Վանաձորի 2, Գյումրու 2, Սպիտակի Գավառի, Ստեփանավանի մասնաճյուղերի գիշերօթիկ հատուկ դպրոցներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ավելի քան 614 երեխակատանա արվեստների և արհեստների ուսուցում:	2014թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 79 032.2 հազ. դրամ

42.	«Դպրոցականի ֆիլիարմոնիա»	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Ճանաչողական, բացատրական համերգների միջոցով երեխաների գեղա- գիտական դաստիարակության, աշխարհայացքի ընդլայնման և վաղվա բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի դաստիարակում:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետությ- ան պետական բյուջե 13 905.0 հազ. դրամ
43.	«Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի գործունեության իրականացում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների և սովորողների մասնա- գիտական ունակու- թյունների զարգացման նպատակով ուսումնամեթոդական և գործնական աջակցության ցուցաբերում:	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետությ- ան պետական բյուջե 64 749.4 հազ. դրամ

44.	Մանկական մուլտֆիլմերի նկարահանում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Մանկական կինոյի զարգացում	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 111 096.6 հազ. դրամ
45.	«Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակություն և բազմակողմանի զարգացում, արվեստի ճյուղերի հետ շփում	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 8 000.0 հազ. դրամ

46.	«Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում	2014 թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 900.0
47.	Տվյալների միասնական շտեմարանի ստեղծում՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ (հաշվի առնելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Թմրանյութերի և հանցավորության հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի (UNODC) կողմից մշակված ցուցիչները)	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Ծահագրգիռ տարբեր գերատեսչությունների գործունեության և ջանքերի առավել արդյունավետ և հետևողական համակարգում	2014 թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

48.	Գիտական վերլուծություն՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և անչափահասների շրջանում կրկնահանցավորության վերաբերյալ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	Հանցավորության դեմ տարվող պայքարի քաղաքականություն՝ հիմնավորված գիտական վերլուծություններով և պարբերաբար թարմացվող տեղեկատվությամբ	2014 թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
49.	12-18 տարեկան հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների /իզական սեռի/ համար վերականգնողական կառույցի ստեղծում	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանություն	Վերականգնողական աշխատանքներ կիրականացվեն վարքի շեղում ունեցող աղջիկների շրջանում	2014 թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

50.	Առկա համայնքային վերականգնողական կենտրոնների զարգացում և ցանցի ընդլայնում	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանություն	Կիրականացվեն կանխարգելման աշխատանքներ իրավախախտ անչափահասների շրջանում	2014 թ. ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
51.	Համայնքներում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանություն	Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների թվի նվազում	2014 թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում
52.	Ավագ դպրոցներում դպրոցական տեսուչ ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանություն	Աշակերտների իրավական գիտելիքների զարգացում, իրավախախտումների կանխարգելում	2014 թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում

